

1. Հաշվետու կազմակերպություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում բռնկված զինված հակամարտությունը, որին հաջորդեց հրադադարի մասին համաձայնագիրը Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ, հանգեցրեց սոցիալական հուզումների Հայաստանում: Չնայած հրադադարի մասին համաձայնագրի, Հայաստանի և Ադրբեյջանի զինված ուժերը ներքաշվել են սահմանային բախման մեջ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը բիզնես միջավայրում:

2022թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև բռնկված ռազմական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին Ռուսաստանի Դաշնության դեմ: Հակամարտությունն ազդեցություն ունի ոչ միայն երկու երկրների տնտեսական գործունեության, այլև՝ համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների արդյունքում աշխարհի շատ երկրներում հումքային և պարենային ապրանքների գներն աճել են, խախտվել են ռեսուրսների մատակարարման հաստատված կապերը, դիտվում է գնաճի ազդեցություն գների վրա, և վերլուծաբանները կանխատեսում են նաև տնտեսական հետևանքներ համաշխարհային արդյունաբերության համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Արմենիա Ինշուրանս» ԱՍԳԸ-ի (Ընկերություն) հիմնադրվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2004թ-ին Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունն ունի Հայաստանի Հանրապետությունում ոչ կյանքի ապահովագրության 15 դասերով գործունեության իրականացման լիցենզիա: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վարդանանց փ. 16/1:

Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մայր ընկերությունն էր «Ռեզիոն ֆինանսական արդյունաբերական կորպորացիա» ՓԲԸ-ն: 2023թ. փետրվարին Ընկերության մայր ընկերությունը դարձավ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն: Ընկերության մայր ընկերության փոփոխության արդյունքում վերջնական հսկող կողմը չի փոխվել:

Ընկերության վերջնական հսկող անձն է Կարեն Սաֆարյանը, ով կարող է ղեկավարել Ընկերության գործառնություններն իր սեփական հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Բացի այդ, նա մասնակցություններ ունի Ընկերության հետ չառնչվող այլ կազմակերպություններում:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 29-ում:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

Համապատասխանության հավաստում

Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Ընկերությունն օգտվել է ՖՀՄՍ 4 «Այստիվագրության պայմանագրեր» ստանդարտով նախատեսված ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կիրառելուց ժամանակավոր ազատումից և նախկինում չի կիրառել ՖՀՄՍ 9-ի որևէ տարբերակ, ներառյալ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող նախորդված ֆինանսական պարտավորությունների գծով օգուտների կամ կորուստների ներկայացման պահանջները մինչև 2018թ. հունվարի 1-ը սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների և բացահայտված պայմանական ակտիվների և պարտավորությունների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է այս ծանոթագրությունում՝

- գնահատում, արդյոք Ընկերության գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ – գնահատման նկարագրություն:

Գնահատում, արդյոք Ընկերության գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ

ՖՀՄՍ 9-ը կիրառելուց ժամանակավոր ազատումը կիրառելի է բոլոր այն կազմակերպությունների համար, որոնց գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ: Այս ազատումից օգտվելու հնարավորությունը գնահատվում է առանձին հաշվետու կազմակերպության մակարդակով և, այդ իսկ պատճառով, կիրառվում է այդ կազմակերպության մակարդակով, մասնավորապես, կիրառվում է հաշվետու կազմակերպության բոլոր ակտիվների և պարտավորությունների նկատմամբ:

Ընկերությունն օգտվել է ՖՀՄՍ 9-ը կիրառելուց ժամանակավոր ազատումից, քանի որ՝

- նախկինում չի կիրառել ՖՀՄՍ 9-ի որևէ տարբերակ և
- Ընկերության գործունեությունն ընդհանուր առմամբ առավելապես կապված է ապահովագրության հետ տարեկան հաշվետու ամսաթվի դրությամբ, որն անմիջապես նախորդում է 2016թ. ապրիլի 1-ը, այսինքն՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՖՀՄՍ 4-ի համաձայն՝ ապահովագրողի գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ միայն այն դեպքում, երբ

- (ա) ՖՀՄՍ 4-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող նրա պարտավորությունների հաշվեկշռային արժեքը, որը ներառում է ավանդային բաղադրիչներ կամ ապահովագրության պայմանագրից տարանջատված պարունակվող ածանցյալ գործիքներ, նշանակալի է ի համեմատություն ապահովագրողի բոլոր ֆինանսական պարտավորությունների ընդհանուր արժեքի, և
- (բ) ապահովագրության հետ կապված պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի և բոլոր պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի տոկոսային հարաբերակցությունը՝
 - (i) գերազանցում է 90 տոկոսը, կամ
 - (ii) պակաս է 90 տոկոսից կամ հավասար է 90 տոկոսի, սակայն գերազանցում է 80 տոկոսը, և ապահովագրողը չի իրականացնում ապահովագրության հետ առնչություն չունեցող նշանակալի գործունեություն:

ՖՀՄՍ 4-ի համաձայն՝ ապահովագրողի գործունեության հետ կապված պարտավորությունները ներառում են.

- (ա) ՖՀՄՍ 4-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող պարտավորությունները,
- (բ) ածանցյալ գործիք չհանդիսացող պարտավորությունները ներդրումային պայմանագրերի գծով, որոնք չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով կիրառելով ՀՀՄՍ 39-ը և
- (գ) պարտավարությունները, որոնք առաջանում են, երբ ապահովագրողը կնքում է (ա) և (բ) կետերում նշված պայմանագրերը կամ կատարում է այդ պայմանագրերով նախատեսված պարտավորությունները: Այսպիսի պարտավորությունների օրինակները ներառում են նշված պայմանագրերի կամ այդ պայմանագրերն ապահովող ակտիվների հետ կապված առաջացող ռիսկերի նվազեցման համար օգտագործվող ածանցյալ գործիքները, համապատասխան հարկային պարտավորությունները, մասնավորապես, նշված պայմանագրերից առաջացող պարտավորությունների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկային պարտավորությունները, թողարկված պարտքային գործիքները, որոնք ներառված են ապահովագրողի նորմատիվային կապիտալում, ապահովագրական գործունեությունում ներգրավված աշխատակիցների աշխատավարձի և այլ հատուցումների գծով պարտավորությունները:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՖՀՄՍ 4-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացող Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմում էր 890,584 հազար դրամ, որն իրենից ներկայացնում էր Ընկերության ընդհանուր պարտավորությունների հաշվեկշռային արժեքի 80%-ը:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովագրական գործունեության հետ կապված պարտավորությունները ներառում էին հետևյալը.

	31 դեկտեմբերի 2015թ.
ՖՀՄՄ 4-ի գործողության ոլորտում գտնվող ապահովագրության հետ կապված պարտավորություններ	890,584
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	799,260
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	17,766
Որպես կանխավճար ստացված ապահովագրավճարներ	73,558
ՖՀՄՄ 4-ի գործողության ոլորտում չներառված ապահովագրության հետ կապված պարտավորություններ	217,400
Այլ պարտավորություններ	85,558
Վերաապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	26,437
Ընթացիկ հարկային պարտավորություն	37,316
Հետաձգված հարկային պարտավորություն	68,089
Ապահովագրական գործունեության հետ կապված պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեք	1,107,984
Պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեք	1,107,984
Ապահովագրության հետ կապված Ընկերության պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի և բոլոր պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի տոկոսային հարաբերակցություն	100%

Ընկերությունը ներգրավված չէր ապահովագրության հետ առնչություն չունեցող այնպիսի գործունեությունում, որից կարող է ստանալ եկամուտ կամ որի հետ կապված կարող է կրել ծախսեր: Ընկերության նկատմամբ կիրառելի են ապահովագրողներին վերաբերող բոլոր օրենսդրական պահանջները, և ապահովագրական ռիսկն այն դիտարկում է որպես իր հիմնական ռիսկը: Բացի այդ, Ընկերությունը չի բացահայտել որևէ քանակական կամ որակական գործոններ (կամ թե՛ քանակական և թե՛ որակական), այդ թվում՝ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվություն, որոնք կարող են վկայել առ այն, որ կանոնակարգող մարմինները կամ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողները կիրառում են ճյուղային այլ դասակարգում Ընկերության նկատմամբ:

Իրականացված գնահատման հիման վրա Ընկերությունը եզրահանգում է, որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործունեությունն առավելապես կապված էր ապահովագրության հետ: 2015թ. դեկտեմբերի 31-ից հետո Ընկերության գործունեությունում նշանակալի փոփոխություններ տեղի չեն ունեցել, այդ իսկ պատճառով, Ընկերությունը կրկին չի գնահատել, թե արդյոք Ընկերության գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ որևէ հաջորդ տարեկան հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Գնահատման անորոշության նշանակալի ոլորտների և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 15 – ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքերի արժեզրկում,
- Ծանոթագրություն 19 – ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների գնահատում:

5. Ապահովագրավճարներ

2022թ.

հազ. դրամ			Առողջության ապահովագրություն	Գույքի ապահովագրություն	Արտերկիր մեկնողների ապահովագրություն	Բեռնափոխադրումների ապահովագրություն	Դժբախտ պատահար	Տրամադրված երաշխավորություններ	Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	Օդանավի վթարի հետևանքով առաջացող պատասխանատվության ապահովագրություն	Այլ	Ընդամենը
	ԱՊՊԱ	ԿԱՍԿՈ										
Համախառն ապահովագրավճարներ	2,124,618	120,903	1,810,229	182,882	82,515	225,446	202,234	148,525	338,697	202,119	148,707	5,586,875
Դադարեցված ապահովագրավճարներ	(99,192)	(2,591)	(119,025)	-	-	(193)	(1,022)	-	-	-	(472)	(222,495)
Չվաստակաձ ապահովագրավճարների ընդհանուր պահուստի փոփոխություն	(173,705)	(20,035)	(399,706)	14,237	(15,629)	(4,578)	27,616	(121,860)	(313,643)	(187,168)	(30,568)	(1,225,039)
Համախառն վաստակաձ ապահովագրավճարներ	1,851,721	98,277	1,291,498	197,119	66,886	220,675	228,828	26,665	25,054	14,951	117,667	4,139,341
Հանած՝ վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները	-	(41,430)	(86,465)	(54,678)	-	(70,250)	(8,774)	(11,058)	(343,613)	(195,473)	(34,194)	(845,935)
Վերաապահովագրողների բաժինը չվաստակաձ ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	-	6,602	942	4,030	-	1,674	5,060	9,880	318,195	181,013	25,541	552,937
Փոխանցված վաստակաձ ապահովագրավճարներ	-	(34,828)	(85,523)	(50,648)	-	(68,576)	(3,714)	(1,178)	(25,418)	(14,460)	(8,653)	(292,998)
Զուտ վաստակաձ ապահովագրավճարներ	1,851,721	63,449	1,205,975	146,471	66,886	152,099	225,114	25,487	(364)	491	109,014	3,846,343

2021թ.

հազ. դրամ

			Առողջության ապահովագրություն	Գույքի ապահովագրություն	Արտերկիր մեկնողների ապահովագրություն	Բեռնափոխադրումների ապահովագրություն	Դժբախտ պատահար	Տրամադրված երաշխավորություններ	Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	Օդանավի վթարի հետևանքով առաջացող պատասխանատվության ապահովագրություն	Այլ	Ընդամենը
	ԱՊՊԱ	ԿԱՍԿՈ										
Համախառն ապահովագրավճարներ	1,783,813	60,197	1,286,599	226,397	33,608	159,509	186,155	-	-	-	129,828	3,866,106
Դադարեցված ապահովագրավճարներ	(116,447)	(417)	(50,629)	(1,077)	-	(224)	(1,153)	-	-	-	(253)	(170,200)
Զվաստակաձ ապահովագրավճարների ընդհանուր պահուստի փոփոխություն	166,430	(17,441)	(73,457)	37,296	(5,510)	(451)	37,608	-	-	-	(6,580)	137,895
Համախառն վաստակաձ ապահովագրավճարներ	1,833,796	42,339	1,162,513	262,616	28,098	158,834	222,610	-	-	-	122,995	3,833,801
Հանած՝ վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները	-	(20,593)	(90,699)	(60,133)	-	(55,220)	(7,417)	-	-	-	(5,583)	(239,645)
Վերաապահովագրողների բաժինը չվաստակաձ ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	-	7,563	910	(5,751)	-	334	(226)	-	-	-	1,879	4,709
Փոխանցված վաստակաձ ապահովագրավճարներ	-	(13,030)	(89,789)	(65,884)	-	(54,886)	(7,643)	-	-	-	(3,704)	(234,936)
Զուտ վաստակաձ ապահովագրավճարներ	1,833,796	29,309	1,072,724	196,732	28,098	103,948	214,967	-	-	-	119,291	3,598,865

«Այլ» դասում ներառված ապահովագրավճարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական վնասների և պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրավճարները:

6. Պահանջներ

2022թ.

հազ. դրամ	ԱՊՊԱ	ԿԱՄԿՈ	Առողջության ապահո- վագրություն	Գույքի ապահո- վագրություն	Արտերկիր մեկնողների ապահո- վագրություն	Բեռնափո- խադրումների ապահո- վագրություն	Դժբախտ պատահար	Այլ	Ընդամենը
Կարգավորված պահանջներ	(943,719)	(5,889)	(906,946)	231	(7,240)	(8,089)	(17,422)	(838)	(1,889,912)
Վերաապահովագրողների բաժինը կարգավորված պահանջներում	-	2,713	-	50	-	4,000	-	-	6,763
Կարգավորված պահանջներ՝ առանց վերաապահովագրության	(943,719)	(3,176)	(906,946)	281	(7,240)	(4,089)	(17,422)	(838)	(1,883,149)
Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստների փոփոխություն	7,315	350	(32,031)	284	246	(2,158)	3,372	(224)	(22,846)
Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստների փոփոխություն	13,995	1,471	417	1,716	(34)	(33,432)	(4,285)	(950)	(21,102)
Պահանջների գծով պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն	-	(297)	-	-	-	29,244	-	-	28,947
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների փոփոխություն	21,310	1,524	(31,614)	2,000	212	(6,346)	(913)	(1,174)	(15,001)
Չուտ տեղի ունեցած պահանջներ	(922,409)	(1,652)	(938,560)	2,281	(7,028)	(10,435)	(18,335)	(2,012)	(1,898,150)

2021թ.

հազ. դրամ	ԱՊՊԱ	ԿԱՄԿՈ	Առողջության ապահո- վագրություն	Գույքի ապահո- վագրություն	Արտերկիր մեկնողների ապահո- վագրություն	Բեռնափո- խադրումների ապահո- վագրություն	Դժբախտ պատահար	Այլ	Ընդամենը
Կարգավորված պահանջներ	(1,305,392)	(11,092)	(841,724)	(2,063)	(5,806)	(2,549)	(27,791)	(19,038)	(2,215,455)
Վերաապահովագրողների բաժինը կարգավորված պահանջներում	-	6,123	99,029	-	-	1,200	-	18,437	124,789
Կարգավորված պահանջներ՝ առանց վերաապահովագրության	(1,305,392)	(4,969)	(742,695)	(2,063)	(5,806)	(1,349)	(27,791)	(601)	(2,090,666)
Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստների փոփոխություն	31,068	632	1,117	16	364	748	(934)	19,688	52,699
Ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստների փոփոխություն	(36,721)	(2,105)	(72,626)	(1,304)	4,857	(8,912)	2,200	18,212	(96,399)
Պահանջների գծով պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն	-	761	-	(265)	-	731	-	(18,473)	(17,246)
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների փոփոխություն	(5,653)	(712)	(71,509)	(1,553)	5,221	(7,433)	1,266	19,427	(60,946)
Չուտ տեղի ունեցած պահանջներ	(1,311,045)	(5,681)	(814,204)	(3,616)	(585)	(8,782)	(26,525)	18,826	(2,151,612)

7. Ձեռքբերման ծախսումներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Գործակալներին վճարված միջնորդավճարներ		
Առողջության ապահովագրություն	336,582	144,831
ԱՊՊԱ	317,598	248,200
Բեռնափոխադրումների ապահովագրություն	53,463	40,761
Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն	34,945	-
Արտերկիր մեկնողների ապահովագրություն	31,661	18,595
Գույքի ապահովագրություն	21,748	49,636
Օդանավի վթարի հետևանքով առաջացող պատասխանատվության ապահովագրություն	19,880	-
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	17,565	48,948
Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՄԿՈ)	12,292	7,959
Տրամադրված երաշխավորություններ	11,742	-
Այլ	8,728	3,307
Ընդամենը ձեռքբերման ծախսումներ	866,204	562,237
Հետաձգված ձեռքբերման ծախսումների փոփոխություն	(218,980)	78,013
Ձեռքբերման ծախսումները տարվա համար	647,224	640,250

Հետաձգված ձեռքբերման ծախսումների փոփոխությունների վերլուծություն

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Հետաձգված ձեռքբերման ծախսումները տարեսկզբի դրությամբ	181,910	259,923
Հետաձգված ձեռքբերման ծախսումների փոփոխություն	218,980	(78,013)
Հետաձգված ձեռքբերման ծախսումները տարեվերջի դրությամբ	400,890	181,910

8. Ապահովագրության այլ ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Վճարումներ «BIVAC» ՓԲԸ-ին	146,388	149,468
Վճարումներ Երաշխավորման ֆոնդին (գործում են 2021թ-ից)	37,011	31,228
Ընդամենը ապահովագրության այլ ծախսեր	183,399	180,696

«BIVAC» ՓԲԸ-ին կատարած վճարումները ASWA (Ավտոապահովագրական մեկ պատուհան) առցանց հարթակի օգտագործման համար, որը նախատեսված է ԱՊՊԱ ապահովագրության համակարգի բոլոր ընթացակարգերը միասնական առցանց միջավայրում կազմակերպելու համար: ASWA առցանց հարթակն օգտագործելու մասին որոշումը կայացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, և հարթակը հասանելի է դարձել օգտագործման համար 2017թ. հունվարից:

Երաշխավորման ֆոնդը ԱՊՊԱ մասին ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ֆոնդ է, որը կառավարվում է Բյուրոյի կողմից և որի նպատակն է հատուցել ապահովադիրներին ապահովագրական պատահար չհանդիսացող պատահարներից կրած վնասները:

9. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտ		
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	829,841	779,370
- տրամադրված փոխառություններ	5,564	5,500
- բանկային ավանդներ	612	621
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	5,419	377
Ֆինանսական եկամուտ	841,436	785,868
Տոկոսային ծախս		
- հետգնման պայմանագրերի գծով	(695,792)	(528,603)
- վարձակալության գծով պարտավորությունների գծով	(9,084)	(11,280)
Ֆինանսական ծախսեր	(704,876)	(539,883)

10. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Անձնակազմի գծով ծախսեր և աշխատավարձին վերաբերող հարկեր	345,510	348,607
Հաշվապահական հաշվառման ծրագրի սպասարկման ծախսեր	40,962	37,178
Մաշվածություն և ամորտիզացիա	36,148	36,017
Բանկային ծառայությունների վճարներ	22,037	20,535
Մասնագիտական ծառայություններ	19,100	15,280
Գրասենյակային ծախսեր	10,604	12,176
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	6,143	6,413
Կապի ծառայություններ	5,917	7,087
Լիցենզիայի վճար	4,760	4,500
Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ կապված ծախսեր	4,728	4,792
Գովազդ	2,029	3,171
Վարձակալության գծով ծախսեր	1,697	1,603
Այլ	20,380	16,546
	520,015	513,905

11. Շահույթահարկ

(ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Ընկերությունը շահույթահարկը վճարում է 18% դրույքաչափով (2021թ-ին՝ 20%):

հազ. դրամ	2022թ.	2021թ.
<i>Ընթացիկ հարկի գծով ծախս</i>		
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	76,585	67,594
<i>Հետաձգված հարկի գծով ծախս</i>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	48,668	(793)
	125,253	66,801

Հարկի արդյունավետ դրույքաչափի համադրում

	2022թ. հազ. դրամ	%	2021թ. հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	685,676		380,158	
Շահույթահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	123,422	18.0	68,428	18.0
Չհարկվող եկամուտ	1,831	0.3	(1,627)	(0.4)
	125,253	18.3	66,801	17.6

(բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու նպատակով որոշված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված են ժամանակավոր տարբերությունների փոփոխությունները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	Ճահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.
Այլ ակտիվներ	(268)	56	-	(212)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(15,150)	4,084	-	(11,066)
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	78,584	-	71,784	150,368
Հետաձգված ձեռքբերման ծախսումների	7,457	(30,954)	-	(23,497)
Ապահովագրության և վերապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(7,928)	2,143	-	(5,785)
Բանկային ավանդներ	(145)	(18)	-	(163)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(96)	4	-	(92)
Վարձակալության գծով պարտավորություններ	16,156	(3,271)	-	12,885
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	(27,359)	12,030	-	(15,329)
Այլ պարտավորություններ	5,244	(32,742)	-	(27,498)
Չուտ հետաձգված հարկային (պարտավորություններ)/ակտիվներ	56,495	(48,668)	71,784	79,611
հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	Ճահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.
Այլ ակտիվներ	(505)	237	-	(268)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(19,234)	4,084	-	(15,150)
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	9,123	-	69,461	78,584
Հետաձգված ձեռքբերման ծախսումների	(6,818)	14,275	-	7,457
Ապահովագրության և վերապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(4,449)	(3,479)	-	(7,928)
Բանկային ավանդներ	(176)	31	-	(145)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(125)	29	-	(96)
Վարձակալության գծով պարտավորություններ	19,477	(3,321)	-	16,156
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	6,397	(33,756)	-	(27,359)
Այլ պարտավորություններ	(17,449)	22,693	-	5,244
Չուտ հետաձգված հարկային (պարտավորություններ)/ակտիվներ	(13,759)	793	69,461	56,495

(գ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

հազ. դրամ	2022թ.			2021թ.		
	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը նախքան հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	398,799	(71,784)	327,015	385,895	(69,461)	316,434
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	-	-	-	-	-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	398,799	(71,784)	327,015	385,895	(69,461)	316,434

12. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգիչներ և այլ սարքավորումներ	Գույք	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	41,293	15,236	50,352	7,799	6,188	120,868
Ավելացումներ	6,598	553	22,019	1,084	2,471	32,725
Օտարումներ/վաճառք	(8,654)	(4,556)	(14,739)	(334)	(53)	(28,336)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	39,237	11,233	57,632	8,549	8,606	125,257
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	39,237	11,233	57,632	8,549	8,606	125,257
Ավելացումներ	1,572	1,173	1,150	347	670	4,912
Օտարումներ/վաճառք	(2,873)	(431)	-	-	-	(3,304)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	37,936	11,975	58,782	8,896	9,276	126,865
Մաշվածություն						
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	(40,762)	(12,102)	(17,774)	(6,322)	(770)	(77,730)
Տարվա մաշվածություն	(4,410)	(573)	(6,762)	(709)	(874)	(13,328)
Դուրսգրումներ	8,654	4,556	14,739	334	53	28,336
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	(36,518)	(8,119)	(9,797)	(6,697)	(1,591)	(62,722)
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	(36,518)	(8,119)	(9,797)	(6,697)	(1,591)	(62,722)
Տարվա մաշվածություն	(3,696)	(593)	(7,288)	(627)	(1,141)	(13,345)
Դուրսգրումներ	2,873	316	-	-	-	3,189
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	(37,341)	(8,396)	(17,085)	(7,324)	(2,732)	(72,878)
Հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2021թ.	531	3,134	32,578	1,477	5,418	43,138
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	2,719	3,114	47,835	1,852	7,015	62,535
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	595	3,579	41,697	1,572	6,544	53,987

13. Այլ ակտիվներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Կանխավճարներ պահանջների գծով	92,121	95,653
Կանխավճարներ ծառայություններ մատուցողներին	6,817	15,195
Հարկերի միասնական հաշիվ	3,245	21,781
Այլ կանխավճարներ	3,103	4,703
	105,286	137,332

14. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ընկերության կողմից պահվող		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ պետական արժեթղթեր	3,497,360	2,703,308
Ընդամենը պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	3,497,360	2,703,308
Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ		
- ՀՀ պետական արժեթղթեր	6,194,310	7,297,953
Ընդամենը պարտքային և հաստատուն եկամտով այլ գործիքներ	6,194,310	7,297,953

Այս արժեթղթերի իրական արժեքի չափումը դասվում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:

Պետական արժեթղթերն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Ներդրումային արժեթղթերի հետ կապված պարտքային, արժույթային և տոկոսադրույքային ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 25-ում:

15. Ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ապահովադիրներից ստացվելիք դեբիտորական պարտքեր՝ առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից	1,026,142	263,221
Սուբրոգացիայի գծով դեբիտորական պարտքեր	45,186	39,256
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք դեբիտորական պարտքեր	14,889	16,681
Գործակալներից ստացվելիք դեբիտորական պարտքեր՝ առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից	5,546	10,069
Վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	1,601	434
	(38,743)	(13,607)
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի պահուստ		

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Սուբորգացիայի գծով պահուստ	(8,222)	(5,068)
	1,046,399	310,986

Ընկերությունը չի ենթարկվում նշանակալի պարտքային ռիսկի մինչև 180 օր ժամկետանց ուղղակի ապահովագրության գործառնությունների արդյունքում ապահովադիրներից ստացվելիք դեբիտորական պարտքերի հետ կապված, քանի որ դրանք մեծամասամբ ծածկվում են չվաստակած ապահովագրավճարների համապատասխան պահուստով, և երբ գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը, ապահովագրության պայմանագրերը կարող են չեղյալ հայտարարվել, որի հետ մեկտեղ չեղյալ է հայտարարվում նաև ապահովագրության պայմանագրին վերաբերող չվաստակած ապահովագրավճարների պահուստը:

Շահույթ չհետապնդող կազմակերպություններից և ապահովագրական ընկերություններից ստացվելիք դեբիտորական պարտքերը ժամկետանց չեն և արժեզրկված չեն: Սուբորգացիայի գծով դեբիտորական պարտքերի կազմում ներառված 8,235 հազար դրամ գումարն ավելի քան 180 օր ժամկետանց:

Ստորև ներկայացված է ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի պահուստի փոփոխությունները:

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	18,675	6,930
Տարվա գուտ ծախս	80,939	19,755
Չուտ դուրսգրում	(52,649)	(8,010)
	46,965	18,675
Մնացորդը տարեվերջի դրությամբ	46,965	18,675

Ընկերությունը ձևավորում է պահուստ ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքերի համար՝ հիմք ընդունելով վերջիններիս ժամկետայնության վերլուծությունը և հաճախորդի վճարունակությունը: Արժեզրկումը խմբային հիմունքով գնահատելիս կիրառվում է անցյալ ժամանակաշրջանների տարեկան վնասի դրույքը 1.4% չափով: Ընկերությունը ձևավորում է նաև հատուկ պահուստ, երբ փաստերը և հանգամանքները վկայում են առանձին հաճախորդի անվճարունակության մասին: Ապահովագրության գծով ավելի քան մեկ տարի ժամկետանց դեբիտորական պարտքերը դուրս են գրվում:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե, օրինակ, գնահատված դրամական հոսքերի գուտ ներկա արժեքը փոխվի հինգ տոկոսով, արժեզրկման գծով պահուստի գումարը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կաճի 52,320 հազար դրամով (2021թ-ին՝ կնվազի/կաճի 15,549 հազար դրամով):

Ստորև ներկայացված է ապահովագրության հետ կապված գործակալներից ստացվելիք դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Համախառն գումար	Արժեզրկում	Համախառն գումար	Արժեզրկում
	2022թ.	2022թ.	2021թ.	2021թ.
Ոչ ժամկետանց	3,411	(56)	1,798	(62)
1-30 օր ժամկետանց	914	(914)	-	-
31-90 օր ժամկետանց	22	-	446	(8)
91-180 օր ժամկետանց	4	-	416	(7)
181-365 օր ժամկետանց	1,195	(1,195)	7,409	(6,692)
	5,546	(2,165)	10,069	(6,769)

Ստորև ներկայացված է ապահովագրության հետ կապված ապահովադիրներից ստացվելիք դերիտորական պարտքերի ժամկետայնությունը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Համախառն գումար	Արժեզրկում	Համախառն գումար	Արժեզրկում
	2022թ.	2022թ.	2021թ.	2021թ.
Ոչ ժամկետանց	829,784	(1,456)	197,260	(523)
1-30 օր ժամկետանց	94,979	(135)	26,549	(54)
31-90 օր ժամկետանց	62,714	(85)	30,931	(220)
91-180 օր ժամկետանց	3,396	(188)	2,127	(194)
181-365 օր ժամկետանց	35,269	(34,714)	6,354	(5,847)
	1,026,142	(36,578)	263,221	(6,838)

16. Տրամադրված փոխառություններ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Հայկական վարկային կազմակերպություններին տրամադրված փոխառություններ	50,292	50,332

Տրամադրված փոխառությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Տրամադրված փոխառությունների հետ կապված պարտքային, արժույթային և տոկոսադրույքի ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 25-ում:

17. Բանկային ավանդներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ավանդներ հինգ խոշորագույն հայկական բանկերում	34,212	21,194
Ավանդներ այլ հայկական բանկերում	8,906	8,906
	43,118	30,100

Բանկային ավանդները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Բանկային ավանդների կենտրոնացում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նման միջոցներ չկային), որոնց մնացորդները գերազանցում են Ընկերության սեփական կապիտալի 10%-ը:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 25,542 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ավանդները (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,473 հազար դրամ) գրավադրված են ապահովագրական գործակալների համար տրամադրված երաշխավորությունների դիմաց:

Տոկոսադրույքային ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

18. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	51,412	53,177
Դրամական միջոցներ ճանապարհին	12,569	14,364
	63,981	67,541

Բանկերում պահվող ընթացիկ հաշիվներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Տոկոսադրույքի ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայնության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

19. Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ

2022թ.

հազ. դրամ	Համախառն գումար	Վերապահովվածություն	Զուտ գումար
Զվաստակած ապահովագրավճարներ	2,274,337	(605,621)	1,668,716
Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջներ	161,254	-	161,254
Տեղեկացված պահանջների պահուստ	581,640	(255,807)	325,833
Ընդամենը ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	3,017,231	(861,428)	2,155,803

2021թ.

հազ. դրամ	Համախառն գումար	Վերաապահովագրություն	Զուտ գումար
Չվաստակաձ ապահովագրավճարներ	1,049,298	(52,684)	996,614
Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջներ	138,408	-	138,408
Տեղեկացված պահանջների պահուստ	560,538	(226,860)	333,678
Ընդամենը ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	1,748,244	(279,544)	1,468,700

(ա) Չվաստակաձ ապահովագրավճարների գծով պահուստների փոփոխությունների վերլուծություն (ներառյալ վերաապահովագրությունը)

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը առ 1 հունվարի	1,049,298	1,187,193
Համախառն ապահովագրավճարներ (Ծնթգ. 6)	5,586,875	3,866,106
Դադարեցված ապահովագրավճարներ (Ծնթգ. 6)	(222,495)	(170,200)
Համախառն վաստակաձ ապահովագրավճարներ (Ծնթգ. 6)	(4,139,341)	(3,833,801)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	2,274,337	1,049,298

(բ) Պահանջների գծով պահուստների փոփոխությունների վերլուծություն (ներառյալ վերաապահովագրությունը)

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը առ 1 հունվարի	698,946	655,246
Ընթացիկ տարվա պահանջների գծով ակնկալվող ծախս	2,028,569	2,211,300
Նախորդ տարվա պահանջների գնահատումների փոփոխություն	(94,709)	47,855
Տարվա ընթացքում կարգավորված պահանջներ (Ծնթգ. 6)	(1,889,912)	(2,215,455)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	742,894	698,946

(գ) Ենթադրություններ և զգայնության վերլուծություն

Ենթադրությունների որոշման գործընթացը

Ակնկալվում է, որ ապահովագրության գծով ակտիվների և պարտավորությունների գնահատման համար օգտագործվող ենթադրությունները կհանգեցնեն այնպիսի պահուստների ձևավորմանը, որոնք բավարար կլինեն ապահովագրության պայմանագրերի գծով առաջացող պարտավորությունները կատարելու համար՝ այնքանով, որքանով դրանք հնարավոր է ողջամտորեն կանխատեսել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով չկարգավորված պահանջների գծով պահուստի ձևավորման հետ կապված անորոշությունը, հավանական է, որ վերջնական արդյունքը կտարբերվի նախապես որոշված պարտավորություններից:

Պահուստը ձևավորվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ մինչև այդ ամսաթիվը տեղի ունեցած պատահարների բոլոր պահանջների (լինեն դրանք ներկայացված, թե՛ ոչ) կարգավորման համար ակնկալվող վերջնական ծախսերի համար, ներառյալ պահանջների կարգավորման արտաքին ծախսերը՝ հանած արդեն իսկ վճարված գումարները:

Պահանջների գծով պահուստը չի գեղջվում փողի ժամանակային արժեքի մասով:

Որպես ենթադրությունների ելակետային տվյալներ սովորաբար օգտագործվում են Ընկերության ներքին աղբյուրների տվյալները, որոնք մանրամասն ուսումնասիրվում են առնվազն տարեկան կտրվածքով: Ենթադրությունները ստուգվում են դիտելի շուկայական տեղեկատվության կամ այլ հրապարակված տեղեկատվության հետ դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գնահատումը, որպես կանոն, ենթադրում է ավելի մեծ անորոշություն, քան արդեն իսկ տեղեկացված պահանջների գնահատումը, որոնց համար առկա է ավելի մեծ ծավալով տեղեկատվություն: Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջները հաճախ հայտնի են դառնում Ընկերությանը պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո որոշ ժամանակ անց: Ընկերության պորտֆելի կարճաժամկետ բնույթի պատճառով, պահանջների բավականին մեծ մասը կարգավորվում է պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո մեկ տարվա ընթացքում:

Է ակտուարային մեթոդներ: Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով պահուստը հաշվարկելու համար կիրառվող մեթոդները ներառում են այնպիսի ակտուարային մեթոդներ, ինչպիսիք են շրջայական աստիճանի մեթոդը, կամ որոշ դեպքերում՝ ակնկալվող կորուստների հարաբերակցության մեթոդը, որը կիրառվում է հիմնավոր գնահատումներ ապահովելու համար, այն դեպքերում, երբ վիճակագրական մեթոդը կիրառելի չէ: Ակտուարները գնահատումներն իրականացնում են օգտագործելով պահանջների վճարումներին, ներկայացված պահանջների թիվը և դեպքերի գծով պահուստներին վերաբերող տեղեկատվությունը (մանրամասները ներկայացված են ստորև):

Չկարգավորված պահանջները գնահատելու համար կիրառվում է շրջայական աստիճանի մեթոդը՝ բազմաթիվ ենթադրությունների համակցությամբ: Շրջայական աստիճանի մեթոդը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների պահանջների փոփոխությունների վրա (վճարումների փոփոխություն և/կամ պահանջների գումարի փոփոխություն, պահանջների թվի փոփոխություն և այլն), ինչը թույլ է տալիս գնահատել ներկայումս առկա և ապագա պահանջների ակնկալվող փոփոխությունները: Այս մեթոդի կիրառումը հիմնականում նպատակահարմար է պատահարի տեղի ունենալուց կամ պայմանագիրը կնքելուց հետո բավական ժամանակ անց, երբ առկա կլինի բավարար տեղեկատվություն այդ պահին գործող պահանջների վերաբերյալ՝ ընդհանուր ակնկալվող պահանջները գնահատելու համար:

Գործունեության բոլոր ոլորտներին, բացառությամբ ԱՊՊԱ-ին վերաբերող խոշոր պահանջները որպես կանոն գնահատվում են առանձին և չափվում են առանձին դեպքի հիմունքով, կամ կանխատեսվում են առանձին՝ այս խոշոր պահանջների փոփոխությունների և գործողության ոլորտի հետ կապված հնարավոր խեղաթյուրված հետևանքները հաշիվ առնելու համար: ԱՊՊԱ-ի համար ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստը գնահատվում է միջին արժեքի մեթոդով՝ պահանջների յուրաքանչյուր դասի համար:

Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների պահուստները և չկարգավորված պահանջների պահուստները սկզբնապես գնահատվում են համախառն հիմունքով, և իրականացվում է առանձին հաշվարկ վերաապահովագրության փոխհատուցումների չափը որոշելու համար:

Զգայնության վերլուծություն

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գործունեության կարճաժամկետ բնույթի պատճառով, Ընկերության պորտֆելը զգայնություն է ցուցաբերում հիմնականում ակնկալվող կորուստների հարաբերակցության և ակնկալվող պահանջների միջին գումարի փոփոխության նկատմամբ: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության սակագները, հիմք ընդունելով այս փոփոխականների վերջին փոփոխությունները՝ վերջին միտումները հաշիվ առնելու համար:

Ղեկավարությունը գտնում է, որ ակնկալվող կորուստների գործակցի և ակնկալվող պահանջների միջին գումարի խելամիտ փոփոխությունը նշանակալի ազդեցություն չի ունենա ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների վրա:

20. Ապահովագրության և վերաապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Գործակալներին և բրոքերներին վճարվելիք գումարներ	555,500	62,087
Վերաապահովագրության գծով վճարվելիք ապահովագրավճարներ	147,747	61,759
Վերադարձման ենթակա ապահովագրավճարներ դադարեցված ապահովագրության պայմանագրերի գծով	67,624	9,423
Վճարվելիք պահանջներ	33,349	19,451
	804,220	152,720

21. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Կապակցված կողմի հետ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ (Ծնթգ. 14)	6,135,000	7,173,054

22. Վարձակալություն

Ընկերությունը վարձակալում է գլխամասային գրասենյակի տարածքը: Վարձակալության ժամկետը կազմում է 5 տարի:

(i) Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը առ 1 հունվարի	84,168	106,857
Տարվա մաշվածության գումար	(22,690)	(22,689)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	61,478	84,168

(ii) Վարձակալության գծով պարտավորություններ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Մնացորդը առ 1 հունվարի	89,755	108,208
Տոկոսային ծախս	9,084	11,280
Վարձավճարներ	(27,255)	(29,733)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	71,584	89,755

23. Այլ պարտավորություններ

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Ծառայություններ մատուցողներին վճարվելիք գումարներ	46,447	32,174
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	1,224	2,344
Այլ ֆինանսական պարտավորություններ	47,671	34,518
Հետաձգված եկամուտ վերաապահովագրության միջնորդավճարների գծով	76,876	5,904
Արձակուրդի գծով պահուստ	45,745	51,432
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	262	-
Այլ	583	607
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	123,466	57,943
	171,137	92,461

24. Կանոնադրական կապիտալ

(ա) Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

Կանոնադրական կապիտալի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ ժամանակ առ ժամանակ հայտարարվող շահաբաժինները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

Ընկերության բաժնեմասերը ենթակա են մարման մասնակցի ընտրությամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Ընկերությունից պարտավոր է վճարել դուրս եկող մասնակցին դուրս գալու տարվա իր գուտ ակտիվների նրա բաժնեմասը դրամական միջոցներով, կամ մասնակցի համաձայնության դեպքում՝ ակտիվների ոչ դրամային փոխանցման տեսքով:

ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացում» ստանդարտի համաձայն՝ մասնակիցներին վերագրելի գուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության վերադարձնելի ֆինանսական գործիքները բավարարում են ՀՀՄՍ 32 ստանդարտով սահմանված սեփական կապիտալում վերադարձնելի ֆինանսական գործիքների ներկայացման բոլոր պահանջները:

(բ) Ծահաբաժիններ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շահաբաժիններ չեն (2021թ-ին՝ 550,000 հազար դրամ):

25. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հիմնարար նշանակություն ունի ապագովագրական գործունեության համար և կազմում է գործառնությունների կենսական տարրը: Շուկայական ռիսկը հիմնական ռիսկն է, որին ենթարկվում է Ընկերությունը, և ներառում է արժույթային, տոկոսադրույքի, պարտքային և իրացվելիության ռիսկերը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և հսկողության մեխանիզմներ, շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և լավագույն պրակտիկայի փոփոխություններն արտացոլելու համար:

Ընկերության Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման ու հսկողության ընթացակարգերի մշակման և ներդրման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության կազմակերպչական կառուցվածքի շրջանակում:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և արժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը եկամտի կամ ֆինանսական գործիքների պորտֆելի արժեքի տատանվելու ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության հետևանքով:

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավել կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

Ստորև աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և վերջիններիս համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները նշված ամսաթվերի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մոտավոր եկամտաբերությունը մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետը:

հազ. դրամ	2022թ.		2021թ.	
	Հաշվեկշռային արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք	Հաշվեկշռային արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Տոկոսակիր ակտիվներ				
Բանկային ավանդներ				
- ՀՀ դրամով	43,118	1.5%	30,100	2.1%
Տրամադրված փոխառություններ				
- ՀՀ դրամով	50,292	11.2%	50,332	11.0%
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր				
- ՀՀ դրամով	9,691,670	8.26%	10,001,261	7.68%
Տոկոսակիր պարտավորություններ				
Հետգնման պայմանագրերի գծով վնարվելիք գումարներ				
- ՀՀ դրամով	(6,135,000)	11.2%	(7,173,054)	8.6%

Տոկոսադրույքի նկատմամբ զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված է սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը, պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններով, որն իրականացվել է 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գոյություն ունեցող դիրքերի և եկամտաբերության բոլոր կորերի 100 բազիսային կետով (բկ) զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

հազ. դրամ	2022թ. Սեփական կապիտալ	2021թ. Սեփական կապիտալ
100 բկ զուգահեռ նվազում	250,634	302,921
100 բկ զուգահեռ աճ	(250,634)	(302,921)

(ii) Արժույթային ռիսկ

Ընկերությունն ունի մի քանի արտարժույթով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արժույթային ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավել կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

Այդ գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ենթարկվածությունն արժույթային ռիսկին

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված	ԱՄՆ դոլարով արտահայտված
	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ապահովագրության և վերաապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	(554,685)	(11,562)
Զուտ ենթարկվածություն	(554,685)	(11,562)

Տարվա ընթացքում կիրառվել արտարժույթի հետևյալ փոխարժեքները.

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
ԱՄՆ դոլար	436	504	394	480
Եվրո	461	596	420	543
Ֆունտ ստերլինգ	542	693	474	646

Զգայնության վերլուծություն

Ստորև ներկայացված դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% հնարավոր աճը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և մինչև հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Շահույթ կամ (վնաս)
31 դեկտեմբերի 2022թ.	
ԱՄՆ դոլար (10% նվազում)	55,469
31 դեկտեմբերի 2021թ.	
ԱՄՆ դոլար (10% նվազում)	1,156

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի նվազումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(iii) Պարտքային ռիսկ

Ընկերության ապահովագրության և վերաապահովագրության գծով դերիտորական պարտքերը, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բանկային ավանդները, տրված փոխառությունները և ընթացիկ հաշիվները ենթարկվում են պարտքային ռիսկի: Պարտքային ռիսկը հնարավոր վնաս կրելու ռիսկն է փոխառուի կողմից պարտքը մարելու անկարողության պատճառով: Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն արտացոլում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

Ընկերությունը վերաապահովագրում է որոշ ռիսկեր վերաապահովագրական ընկերություններում: Վերաապահովագրական ընկերություն ընտրելիս հաշվի է առնվում վերջինիս վճարունակությունը և հուսալիությունը և համագործակցության նախկին փորձն Ընկերության հետ: Վերաապահովագրական ընկերություններում պահվող մնացորդներից ոչ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Ապահովադիրներից գումարները չստանալու ռիսկը նվազեցնելու համար ապահովագրության պայմանագրում ներառվում է դրույթ, համաձայն որի ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում ապահովագրավճարը սահմանված ամսաթվին չվճարելու դեպքում: Գործակալներից ստացվելիք դեբիտորական պարտքերը կառավարելու համար սահմանվում են համապատասխան սահմանաչափեր:

Բանկային ավանդների և ընթացիկ հաշվիների հետ կապված պարտքային ռիսկը նվազեցնելու համար Ընկերությունը կատարում է տարաբնույթ տեղաբաշխումներ և ներդրումներ է կատարում հիմնականում Հայաստանի այն բանկերում, որոնց վճարունակությունը ղեկավարության կողմից գնահատվում է որպես բարձր:

Ներդրումային արժեթղթերի գծով պարտքային ռիսկը մեղմելու նպատակով Ընկերությունը ներդրումները կատարում է միայն պետական արժեթղթերում:

ԱՊՊԱ գծով ուղղակի ապահովագրության գործառնություններից առաջացող ապահովադիրներից և գործակալներից ստացվելիք դեբիտորական պարտքերի պարտքային ռիսկը մեղմացվում է ASWA առցանց հարթակի օգտագործման միջոցով 2017թ-ից: ASWA առցանց հարթակի միջոցով ԱՊՊԱ համար կնքված բոլոր պայմանագրերն ուժի մեջ են մտնում այն պահից, երբ պայմանագրային կողմը կատարում է վճարումը:

(iv) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ իր հանձնառությունները կատարելիս:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները կատարելու համար: Ընկերության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Համապատասխան պայմանագրերի համաձայն՝ Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները և ապահովագրության պայմանագրերի գծով պահուստները ենթակա են մարման հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում, բացառությամբ ներդրումային արժեթղթերի, որոնք պայմանագրի համաձայն հիմնականում ենթակա են մարման հաշվետու ամսաթվից ավելի քան մեկ տարի հետո, այնուամենայնիվ, ղեկավարությունը գտնում է, որ պետական պարտատոմսերի շուկան ակտիվ է, և իրացվելիության հետ կապված խնդիրների դեպքում Ընկերությունը կարող է վաճառել այդ ակտիվներն ավելի կարճ ժամկետում: Ղեկավարությունը գտնում է, որ ապահովագրության պայմանագրերի պարտավորությունների գծով դրամական միջոցների արտահոսքի ակնկալվող ժամկետը չի գերազանցում մեկ տարին:

(q) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ընկերության գնահատմամբ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքներն էականորեն չեն տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից՝ հաշվի առնելով այս գործիքների կարճաժամկետ բնույթը:

26. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է երկրի օրենսդրությամբ ապահովագրական ընկերությունների համար որպես կապիտալ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ ապահովագրական ընկերությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 1,500,000 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,500,000 հազար դրամ):

Բացի այդ, կապիտալի համար գործող ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն, Ընկերությունը պետք է ապահովի սահմանված նվազագույն մակարդակը գերազանցող կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշ («կապիտալի համարժեքության ցուցանիշ»): 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս նվազագույն մակարդակը կազմում է 1 (2021թ-ին՝ 1): 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված ցուցանիշին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	2022թ. Աուգիտի չենթարկված	2021թ. Աուգիտի չենթարկված
Կանոնադրական կապիտալ	968,000	968,000
Գլխավոր պահուստ	145,200	145,200
Զբաղիված շահույթն ըստ ՀՀ ԿԲ-ի հաշվապահական հաշվառման սկզբունքների՝ հանած ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով պահանջվող նվազեցումները	1,163,784	1,141,511
Ընդամենը կապիտալ	2,276,984	2,254,711
Ռիսկով կշռված ակտիվներ	1,962,850	1,719,997
Կապիտալի համարժեքության ցուցանիշ	1.16	1.31

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված պարտքային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավը կամ երաշխավորությունը:

Ընկերության մոտեցումը կապիտալի կառավարման նկատմամբ չի փոփոխվել 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

27. Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Դեկլարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, նշանակալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել

տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Դեկլարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

28. Փոխատվության հանձնառություններ

Ընկերությունը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ կապակցված կողմ հանդիսացող բանկից գործակալների կողմից ստացված վարկերի մարումները երաշխավորելու համար: Այս պայմանագրերն ունեն հաստատուն սահմանաչափեր և սվորաբար գործում են մինչև մեկ տարի ժամկետով:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է 19,014 հազար դրամ գումարով երաշխավորություններ երրորդ կողմի վարկերի համար (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,831 հազար դրամ):

29. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հսկողություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մայր ընկերությունն էր «Ռեզիոն ֆինանսական արդյունաբերական կորպորացիա» ՓԲԸ-ն: 2023թ. փետրվարին Ընկերության մայր ընկերությունը դարձավ «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն: 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության մայր ընկերության փոփոխությունից հետո Ընկերության վերջնական հսկող անձն է Կարեն Սաֆարյանը:

Ընկերության մայր ընկերությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի անդամների և վերադաս ղեկավարության հետ

Վարչական ծախսերում ներառված Տնօրենների խորհրդի անդամների և վերադաս ղեկավարության ընդհանուր վարձատրությունը (Ծանոթագրություն 11) կազմում է 95,108 հազար դրամ (2021թ-ին՝ 103,026 հազար դրամ):

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերի հետ գործարքները հիմնականում ներառում են վերջնական մասնակցի հսկողության ներքո գտնվող ընկերությունների հետ իրականացված գործարքները:

Ստորև ներկայացված են 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները:

	2022թ.		2021թ.	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ակտիվներ				
Ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	103,206	-	61,063	-
Բանկային ավանդներ	34,212	0.1%	21,194	0.1%
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,238	-	35,984	-
Պարտավորություններ				
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջներ	(275,134)	-	(241,557)	-
Ապահովագրության գծով դեբիտորական պարտք	40,851	-	21,443	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(6,135,000)	11.2%	(7,173,054)	8.6%
Արտահաշվեկշռային հոդվածներ				
Ստացված երաշխավորություններ	85,142	2%	688,779	2%

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները պետք է մարվեն հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում (բացառությամբ 17,023 հազար դրամ գումարով ավանդների, որոնց մարման ժամկետը լրանում է 2023թ. դեկտեմբերին): Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ, բացառությամբ ստացված երաշխավորությունների, որոնց դիմաց գրավադրված են Ընկերության ավանդները:

Ստորև ներկայացված են 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների արդյունքները:

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն		
Համախառն ապահովագրավճարներ	1,087,999	618,584
Համախառն ձեռքբերման ծախսումներ	333,937	217,729
Կարգավորված պահանջներ	(21,140)	(18,864)
Ֆինանսական ծախսեր (տոկոսներ հետգնման պայմանագրերի գծով)	(695,791)	(528,602)
Վարչական ծախսեր (վարձակալություն)	(1,697)	(1,503)

30. Ապահովագրական ռիսկի կառավարում

(ա) Ռիսկի կառավարման նպատակները և ապահովագրական ռիսկի նվազեցման քաղաքականությունը

Ընկերության կողմից իրականացվող հիմնական ապահովագրական գործունեությունը ենթադրում է վնաս կրելու ռիսկ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից, որոնք ուղղակիորեն ենթարկվում են ռիսկի: Նման ռիսկերը կարող են վերաբերվել գույքին, պարտավորություններին, դժբախտ պատահարներին, առողջությանը, բեռնափոխադրումներին և այլ վտանգներին, որոնք կարող են առաջանալ ապահովագրվող պատահարից: Արդյունքում, Ընկերության համար ռիսկի գործոն է հանդիսանում ապահովագրության պայմանագրի պահանջների ժամկետների և բարդության հետ կապված անորոշությունը: Հիմնական ռիսկը կայանում է նրանում, որ պահանջների հաճախականությունը և բարդությունը կարող է նախատեսվածից ավելի մեծ լինել: Ապահովագրվող պատահարներն իրենց բնությամբ հազվադեպ են, և մեկ տարվա ընթացքում պատահարների փաստացի քանակը և չափը կարող է տարբերվել ընդունված վիճակագրական մեթոդով գնահատվածներից:

Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի հետ կապված ռիսկերը սովորաբար ներառում են տասներկու ամիս ժամանակահատված: Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի հետ կապված առավել նշանակալի ռիսկերն առաջանում են համապատասխան իրավական դաշտի ու ապահովադիրների վարքագծի փոփոխությունների, բնական աղետների և ահաբեկչական գործողությունների արդյունքում: Բժշկական ապահովագրության պայմանագրերի համար առավել նշանակալի ռիսկերն առաջանում են համաճարակների, բնական աղետների և բժշկական օգնության անող ծախսերի հետ կապված:

Ապահովագրական և ներդրումային գործունեություն իրականացնելիս Ընկերությունը ենթարկվում է նաև շուկայական ռիսկի:

Ընկերությունն ապահովագրական ռիսկը կառավարում է ընդունված վիճակագրական մեթոդների, ռիսկերի կենտրոնացման վերաապահովագրման, անդերրայթինգի սահմանաչափերի, գործառնությունների հաստատման ընթացակարգերի, գնորդման ուղեցույցների և առաջացող խնդիրների մշտադիտարկման միջոցով:

(i) Անդերրայթինգի ռազմավարություն

Ընկերության անդերրայթինգի ռազմավարության նպատակը տարբերակված պորտֆելի ապահովումն է, որի արդյունքում Ընկերության պորտֆելը ցանկացած պահի կներառի ոչ փոխկապակցվող ռիսկերի մի շարք դասեր, և ռիսկի յուրաքանչյուր դասը, իր հերթին, անդրադարձ կգտնի մեծ թվով ապահովագրության պայմանագրերում: Ղեկավարությունը գտնում է, որ այս մոտեցումը նվազեցնում է արդյունքի փոփոխականությունը:

Անդերրայթինգի ռազմավարությունը ներկայացվում է գործարար ծրագրում, որը սահմանում է ապահովագրման ենթակա գործունեության դասերը և ենթադասերը և այն տարածքը, որտեղ գործունեությունը պետք է ապահովագրվի: Ռազմավարությունն իրականացվում է անդերրայթինգի ուղեցույցների միջոցով, որոնք սահմանում են անդերրայթինգի մանրամասն կանոններ ծառայությունների յուրաքանչյուր տեսակի համար: Ուղեցույցներն անդրադառնում են ապահովագրություն հասկացությանը և ընթացակարգերին, հարակից ռիսկերի նկարագրերին, ժամկետներին և պայմաններին, իրավունքներին և պարտականություններին, փաստաթղթավորման պահանջներին, պայմանագրերի ձևերին/պոլիսների օրինակներին, կիրառելի սակագների հիմնավորմանը և վերջիններիս վրա ազդող գործոններին: Սակագների հաշվարկն իրականացնելիս հիմք են ընդունվում հավանականությունը և փոփոխականությունը:

Անդերրայթինգի ուղեցույցների պահպանումը կանոնավոր կերպով վերահսկվում է ղեկավարության կողմից:

(ii) Վերաապահովագրության ռազմավարություն

Ընկերությունը վերաապահովագրում է անդերրայթինգի ենթարկվող ռիսկերի մի մասը՝ վնաս կրելու ռիսկը կառավարելու և կապիտալ ռեսուրսների պահպանությունն ապահովելու համար: Ընկերությունը հիմնականում գնում է օրիգատոր և ֆակուլտատիվ, ֆակուլտատիվ-օրիգատոր վերաապահովագրության պայմանագրեր, շարունակելով աշխատել արդեն իսկ ընտրված ապահովագրական գումարի էքսցեդենտի վրա հիմնված համամասնական վերաապահովագրության սկզբունքով, ինչը թույլ է տալիս նվազեցնել ռիսկին գուտ ենթարկվածությունը 5,000 հազար դրամից 120,000 հազար դրամի՝ կախված յուրաքանչյուր ապահովագրության դասից, բացառությամբ երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրության և առողջության ապահովագրության, որտեղ ռիսկի առավելագույն ընդունելի չափը կազմում է ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 10%-ը: Առողջության ապահովագրությունում ներառված կրիտիկական հիվանդություններից ապահովագրության պայմանագրերն ամբողջությամբ վերաապահովագրված են:

Ընկերությունը կանոնավոր հիմունքով հսկում է վերաապահովագրվողների ֆինանսական վիճակը և պարբերաբար վերանայում է վերաապահովագրության պայմանները:

(բ) Ապահովագրության պայմանագրերի պայմանները և ներառվող ռիսկերի բնույթը

Ստորև ներկայացված են ապահովագրության պայմանագրերի այն պայմանները, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ապահովագրության պայմանագրերից առաջացող ապագա դրամական հոսքերի գումարների, ժամկետների և անորոշության վրա: Բացի այդ, ստորև ներկայացվածը թույլ է տալիս գնահատել Ընկերության հիմնական ծառայությունները և հարակից ռիսկերի կառավարման համար կիրառվող Ընկերության մեթոդները:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԱՊՊԱ և ԿԱՍԿՈ)

Առանձնահատկությունները

Ընկերության ապահովագրության պորտֆելի մեծ մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությանը՝ հիմնականում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը (ԱՊՊԱ): ԱՊՊԱ պայմանագրերով փոխադրամիջոցի սեփականատիրոջը փոխհատուցվում են այն գումարները, որոնք պետք է վճարվեն երրորդ անձանց գույքին հասցված վնասների կամ անձնական վնասների համար: Այդ իսկ պատճառով, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը ներառում է համապատասխանաբար կարճ և երկար ժամանակահատված ապահովագրական գումարը ստանալու և հատուցումը վճարելու միջև: Որպես կանոն, առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովագրին ավտոտրանսպորտային միջոցի գույքային վնաս հասցնելու համար: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերվում են անձնական վնասների գծով հատուցումներին: ԿԱՍԿՈ պայմանագրերով կազմակերպություններին և ֆիզիկական անձանց փոխհատուցվում է վերջիններիս ավտոտրանսպորտային միջոցներին հասցված վնասը:

Ռիսկի կառավարումը

Որպես կանոն, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն գծով պահանջները ներկայացվում են ոչ մեծ հետաձգումներով, և պահանջների բարդությունը համեմատաբար մեծ չէ: Ընդհանուր առմամբ, գործունեության այս ոլորտի պահանջների գծով պարտավորություններն առաջացնում են միջին չափի ռիսկ: Ընկերությունը վերահսկում է վերանորոգման ծախսերի, վնասվածքների փոխհատուցման, գողությունների և դժբախտ պատահարների հետ կապված պահանջների հաճախականության հետ կապված փոփոխությունները և ձեռնարկում է համապատասխան քայլեր դրանց ուղղությամբ:

Պահանջների ներկայացման հաճախականության վրա ազդում են անբարենպաստ եղանակային պայմանները, պահանջների քանակն ավելի մեծ է լինում ձմռան ամիսներին:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության տեսակները ենթարկվում են անդերրայթինգի՝ ելնելով պատահարների վիճակագրական տվյալներից: Ընկերությունը վերաապահովագրում է ԿԱՄԿՈ ռիսկերը համամասնական վերաապահովագրության պայմաններով, որի արդյունքում Ընկերության կողմից հատուցման ենթակա առավելագույն վնասի չափը կազմում է 24,000 հազար դրամ:

Առողջության ապահովագրություն

Առանձնահատկությունները

Այս պայմանագրերը հատուցում են բուժման և հիվանդանոցային ծախսերը:

Ռիսկի կառավարում

Առողջության ապահովագրական ծածկույթը վերաբերում է բուժում պահանջող առաջնային կարիքներին: Ընկերությունը կառավարում է իր ռիսկերը հիմնականում մշակելով կորպորատիվ քաղաքականություն և իրականացնելով բժշկական գնումներ, որի արդյունքում գինը որոշվում է հաշվի առնելով անձի ներկայիս առողջական վիճակը:

Ավիացիոն ռիսկերի ապահովագրություն

Առանձնահատկությունները

Ընկերությունն իրականացնում է օդանավերի ապահովագրություն: Օդանավերի ապահովագրությունը ծածկում է վնասները, որոնք առաջանում են օդանավերի սպասարկումից և օգտագործումից առաջացած ավիացիոն ռիսկերի, գույքային վնասի, բեռի կորստի կամ մարդկանց վնասվածքների հետևանքով: Այն պաշտպանում է սեփականատերերին և օդանավ շահագործողներին չնախատեսված վնասից:

Ռիսկի կառավարում

Ավիացիոն ռիսկերի ապահովագրության հետ կապված հիմնական ռիսկերն են անդերրայթինգի ռիսկը և և պահանջների առաջացման ռիսկը (ներառյալ բնական աղետների տեղի ունենալու փոփոխական հաճախականությունը): Ընկերությունը նաև ենթարկվում է պահանջատերերի կողմից չափազանցման և անազնիվ գործողությունների ռիսկին:

Այդ ռիսկերը կառավարվում են հիմնականում գնի որոշման և վերաապահովագրության գործընթացների միջոցով: Ընկերությունը օգտագործում է անդերրայթինգի խիստ չափանիշներ, ապահովելու համար վնասի ռիսկի ընդունելի լինելն Ընկերության համար՝ սահմանելով որոշակի սահմանաչափեր վնասի յուրաքանչյուր տեսակի համար և իրականացնելով ամբողջական վերաապահովագրություն:

Գույքի ապահովագրություն

Առանձնահատկությունները

Ընկերությունն իրականացնում է գույքի ապահովագրություն, որը ներառում է մասնավոր և արդյունաբերական գույքի ապահովագրությունը: Գույքի ապահովագրությունը հատուցում է ապահովագրին, հաշվի առնելով ցանկացած սահմանաչափերը և սահմանված չափը գերազանցող քանակությունը, սեփական նյութական գույքի կորուստը կամ վնասը:

Շենքերին կամ պարունակությանը հասցված վնասի համար պահանջ ներկայացնելու պատճառ հանդիսացող պատահարը սովորաբար տեղի է ունենում հանկարծակի (ինչպես հրդեհի և կողոպուտի դեպքում), և պատճառը պարզելը հեշտ է: Այդպիսով, պահանջի մասին անմիջապես հայտնի է դառնում և այն կարող է կարգավորվել առանց ուշացման: Հետևաբար, գույքի ապահովագրությունը որակվում է որպես ապահովագրության տեսակ, որի դեպքում պահանջները ներկայացվում և կարգավորվում են կարճ ժամկետում:

Ռիսկի կառավարում

Գույքի ապահովագրության հետ կապված հիմնական ռիսկերն են անդերրայթինգի ռիսկը, մրցակցության ռիսկ և պահանջների առաջացման ռիսկը (ներառյալ բնական աղետների տեղի ունենալու փոփոխական հաճախականությունը): Ընկերությունը նաև ենթարկվում է պահանջատերերի կողմից չափազանցման և անազնիվ գործողությունների ռիսկին:

Անդերրայթինգի ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի գանձում ապահովագրավճարներ, որոնք համապատասխանում են իր կողմից ապահովագրված գույքի տարբեր տեսակներին: Մասնավոր գույքի ապահովագրության դեպքում ակնկալվում է, որ կլինի մեծ քանակությամբ գույք նմանատիպ ռիսկային պրոֆիլով: Այնուամենայնիվ, կոմերցիոն բիզնեսի համար դա կարող է այդպես չլինել: Կոմերցիոն գույքի շատ առաջարկներ ներառում են գտնվելու վայրի, բիզնեսի տեսակի և անվտանգության միջոցների եզակի համադրություն: Այդ ապահովագրության պայմանագրերի հետ կապված ռիսկին համարժեք ապահովագրավճարի հաշվարկը սուբյեկտիվ կլինի և, հետևաբար, ռիսկային:

Այդ ռիսկերը կառավարվում են հիմնականում գնի որոշման և վերաապահովագրության գործընթացների միջոցով: Ընկերությունը օգտագործում է անդերրայթինգի խիստ չափանիշներ, ապահովելու համար վնասի ռիսկի ընդունելի լիմեյթ Ընկերության համար: Ընկերությունը վերաապահովագրում է իր գույքային ռիսկերը ապահովագրական գումարի էքսցեդենտի վրա հիմնված պայմանագրերի և ֆակուլտատիվ վերաապահովագրության պայմանագրերի միջոցով: Պայմանագրերը սահմանափակում են Ընկերության ենթարկվածությունը ռիսկին մինչև 60,000 հազար դրամ՝ փոխադարձաբար կապակցված ռիսկերի համար:

Արտերկիր մեկնողների ապահովագրություն

Առանձնահատկությունները

Արտերկիր մեկնողների ապահովագրությունը տրամադրում է ծածկույթ չնախատեսված պատահարների հետևանքով ապահովագրված անձանց անհրաժեշտ բժշկական և բժշկական-տրանսպորտային աջակցության համար: Ընկերությունը կառավարում է իր ռիսկերը հիմնականում մշակելով կորպորատիվ քաղաքականություն և իրականացնելով բժշկական գնումներ, որի արդյունքում գինը որոշվում է հաշվի առնելով անձի ներկայիս առողջական վիճակը:

Ռիսկի կառավարում

Ընկերության համար ռիսկի կառավարման առանցքային բաղադրիչն անդերրայթինգի ռազմավարությունն է, որը կենտրոնացած է որակյալ բիզնեսի մշակման վրա: Գինը պետք է ներառի համապատասխան ապահովագրավճարներն ապահովագրության այս տեսակի համար:

Բեռնափոխադրումների ապահովագրություն

Առանձնահատկությունները

Բեռնափոխադրումների ապահովագրությունը տրամադրում է ծածկույթ փոխադրման ընթացքում գույքի (բեռների) ոչնչացման, կորստի կամ վնասի համար: Ընկերությունը կառավարում է իր ռիսկերը հիմնականում մշակելով կորպորատիվ քաղաքականություն և իրականացնելով գնումներ, որի արդյունքում գինը որոշվում է հաշվի առնելով ներկայիս վիճակը:

Ռիսկի կառավարում

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում ընդունել այնպիսի ռիսկեր, որոնց գծով ակնկալվող շահույթը համաչափ չէ ընդունված ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

Տրամադրված երաշխավորություններ

Առանձնահատկությունները

Տրամադրված երաշխավորություններ ապահովում են ծածկույթ տրանսպորտային միջոցների սեփականատերերի կողմից պետական բյուջե տուրքերը չվճարելու համար: Ընկերությունը կառավարում է իր ռիսկերը հիմնականում մշակելով կորպորատիվ քաղաքականություն և իրականացնելով գնումներ, որի արդյունքում գինը որոշվում է հաշվի առնելով ներկայիս վիճակը:

Ընկերությունն այդ պայմանագրերը դիտարկում և հաշվառում է որպես ապահովագրության պայմանագրեր:

Ռիսկի կառավարում

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում ընդունել այնպիսի ռիսկեր, որոնց գծով ակնկալվող շահույթը համապատասխան չէ ընդունված ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

Այլ ապահովագրություն

Այս պայմանագրերը ներառում են դժբախտ պատահարների և գործունեության այլ տեսակների հետ կապված ապահովագրության պայմանագրերը:

Առանձնահատկությունները

Այս պայմանագրերն ապահովում են ապահովագրական ծածկույթ հիմնականում դժբախտ պատահարների հետևանքով կրած ֆինանսական վնասի և բանկերի ֆինանսական վնասի համար:

Ռիսկի կառավարում

Ընկերության համար ռիսկի կառավարման առանցքային բաղադրիչն անդերրայթինգի ռազմավարությունն է, որը կենտրոնացած է որակյալ բիզնեսի մշակման վրա: Գինը պետք է ներառի համապատասխան ապահովագրավճարները ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար: Ընկերությունն օգտագործում է վերաապահովագրությունը եզակի դեպքի հետ կապված նշանակալի վնաս կրելու ռիսկը մեղմելու համար:

(գ) Ապահովագրական ռիսկի կենտրոնացում

Ընկերության ապահովագրական ռիսկի առանցքային խնդիրն ապահովագրական ռիսկի կենտրոնացումն է, որը կարող է առաջանալ, եթե առանձին պատահարը կամ պատահարների շարքը զգալի ազդեցություն ունենա Ընկերության պարտավորությունների վրա: Նման կենտրոնացումները կարող են առաջանալ ապահովագրության մեկ առանձին պայմանագրից կամ համանման ռիսկային առանձնահատկություններով մի շարք փոխկապակցված պայմանագրերից և վերաբերվում այն հանգամանքներին, որոնք կարող են տեղիք տալ զգալի պարտավորությունների: Ապահովագրական ռիսկի կենտրոնացման կարևոր հանգամանքն այն է, որ այն կարող է առաջանալ մի շարք առանձին դասերի կամ պայմանագրերի շարքի հետ կապված ռիսկերի կուտակումից:

Ռիսկի կենտրոնացումը կարող է առաջանալ բարդ հետևանքներով և փոքր հաճախականությամբ պատահարներից, այդ թվում՝ բնական աղետներից և այնպիսի իրավիճակներում, որտեղ անդերրայթինգն ուղղված է առանձին խմբին, օրինակ՝ առանձին աշխարհագրական տարածաշրջանին:

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում ընդունել այնպիսի ռիսկեր, որոնց գծով ակնկալվող շահույթը համապատասխան չէ ընդունված ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը ձեռք է բերում վերաապահովագրություն ավտոտրանսպորտային միջոցների, գույքի և բեռնափոխադրումների ապահովագրության և այլ ապահովագրատեսակների համար: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

(դ) Վերաապահովագրական ռիսկ

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկն անհատական և պորտֆելային մակարդակով ռիսկերը ներառող տարբեր պայմանագրերի գծով անդերրայթինգի վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության այս պայմանագրերը բաշխում են ռիսկը և նվազագույնի են հասցնում վնասի հետևանքները: Յուրաքանչյուր ռիսկի գումարը կախված է առանձին ռիսկի Ընկերության գնահատականից, սակայն, ցանկացած դեպքում, չի գերազանցում 120,000 հազար դրամը բոլոր ապահովագրատեսակների ցանկացած պայմանագրի համար, բացառությամբ երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրությանը և առողջության ապահովագրությանը, որտեղ ռիսկի առավելագույն ընդունելի չափը կազմում է օրական կտրվածքով սեփական կապիտալի միջին մնացորդի 10%-ը:

Վերաապահովագրության պայմանագրերի պայմանների համաձայն՝ վերաապահովագրողը համաձայնվում է փոխհատուցել փոխանցված գումարը՝ պահանջը վճարելու դեպքում: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է պարտավորություն կրել իր ապահովադիրների առջև փոխանցված ապահովագրության հետ կապված, եթե վերաապահովագրողին չհաջողվի կատարել ստանձնած պարտականությունները:

Վերաապահովագրողին ընտրելիս Ընկերությունը հաշվի է առնում նրա վճարունակությունը: Վերաապահովագրողի վճարունակությունը գնահատվում է հիմք ընդունելով արտաքին վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունը և ներքին հետազոտությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը:

(ե) Պահանջների զարգացումը

Պահանջների զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է Ընկերության ապահովագրական ռիսկը լուսաբանելու նպատակով: Աղյուսակներում համեմատվում են պատահարի տարվա ընթացքում վճարված հատուցումներն այդ հատուցումների գծով ձևավորված պահուստների հետ: Աղյուսակի վերին մասում ներկայացվում է կուտակային պահանջների ներկա գնահատականը և ցուցադրվում են գնահատված պահանջների փոփոխությունները հետագա հաշվետու տարվա կամ պատահարի տարվա վերջում: Գնահատված գումարը ավելանում կամ նվազում է վնասների վճարմանը գուզահեռ և երբ ավելի մեծ ծավալով տեղեկատվություն է հայտնի դառնում չվճարված պահանջների բարդության և հաճախականության մասին: Աղյուսակի ստորին մասում ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ընդհանուր պահուստի և կուտակային պահանջների գնահատականի համադրումը:

Թեև աղյուսակում ներառված տեղեկատվությունը ներկայացնում է չվճարված պահանջների գնահատականի համապատասխան լինելն անցյալի փորձի տեսանկյունից, այս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները նախագուշացվում են ներկայիս չվճարված վնասի մնացորդի վրա նախկին ավելցուկը կամ պակասորդը չտարածելու վերաբերյալ: Ընկերությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել 2022թ. վերջի դրությամբ վճարման ենթակա ընդհանուր պահանջները: Այնուամենայնիվ, ելնելով պահուստավորման գործընթացին բնորոշ անորոշություններից, հնարավոր չէ միանշանակորեն հաստատել, որ ի վերջո կպարզվի, որ այս պահանջները համապատասխանորեն են գնահատված:

Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Ընդամենը

հազ. դրամ	Պատահարի տարի							Ընդամենը
	2016թ. և ավելի վաղ	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	
Կուտակային պահանջների գնահատական								
Պատահարի տարվա վերջի դրությամբ	4,737,238	1,248,229	2,004,962	1,917,805	1,757,834	2,211,298	2,028,569	14,944,340
- մեկ տարի անց	4,325,198	1,197,314	1,719,112	1,812,389	1,764,672	2,153,073	-	-
- երկու տարի անց	4,317,617	1,194,684	1,709,958	1,836,065	1,739,723	-	-	-
- երեք տարի անց	4,284,344	1,193,127	1,721,250	1,833,754	-	-	-	-
- չորս տարի անց	4,277,118	1,196,737	1,716,393	-	-	-	-	-
- հինգ տարի անց	4,280,458	1,193,761	-	-	-	-	-	-
- վեց տարի և ավել անց	4,279,067	-	-	-	-	-	-	-
Կուտակային պահանջների գնահատական	4,279,067	1,193,761	1,716,393	1,833,754	1,739,723	2,153,073	2,028,569	14,944,340
Կատարված կուտակային վճարումները հաշվետու ամսաթվի դրությամբ	(4,278,965)	(1,193,362)	(1,489,683)	(1,829,603)	(1,730,060)	(2,122,039)	(1,557,734)	(14,201,446)
Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով	102	399	226,710	4,151	9,663	31,034	470,835	742,894

31. Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

32. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասեր

Գործող ստանդարտների մի շարք փոփոխություններ ուժի մեջ են մտել 2022թ. հունվարի 1-ից, որոնք սակայն նշանակալի ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ընկերության կողմից կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնց գնահատված արժեքն արտահայտված է արտարժույթով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերահաշվարկից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Ապահովագրության պայմանագրեր

(i) Պայմանագրերի դասակարգում

Ապահովագրության պայմանագիրն այն պայմանագիրն է, համաձայն որի Ընկերությունը պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) հանձն է առնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին կամ այլ շահառուին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի կամ այլ շահառուի վրա: Ապահովագրական ռիսկը չի ներառում ֆինանսական ռիսկը: Ֆինանսական ռիսկը հետևյալ նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույք, արժեթղթի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկանիշ կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին: Ապահովագրության պայմանագրերը կարող են փոխանցել նաև որոշ ֆինանսական ռիսկ: Ապահովագրական ռիսկը նշանակալի է միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է Ընկերության կողմից նշանակալի հատուցումների վճարման պատճառ դառնալ: Պայմանագիրը, որը դասվում է որպես ապահովագրության պայմանագիր, շարունակում է գործել որպես ապահովագրության պայմանագիր, մինչև բոլոր իրավունքների և պարտականությունների մարվելը, կամ դրանց ուժի մեջ լինելու ժամկետի լրանալը: Պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությանն ապահովադրից փոխանցվող ռիսկը նշանակալի չէ, դասվում են որպես ֆինանսական գործիքներ:

(ii) Պայմանագրերի ճանաչում և չափում

Ապահովագրավճարներ

Ապահովագրավճարները բացահայտվում են առանց դադարեցումիների, համախառն հիմունքով ներառելով միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները և բացառելով ապահովագրավճարների գծով հարկերը և տուրքերը: Ստացված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես հասույթ: Ընկերությունն ապահովագրավճարները վաստակում է շիսկն իր վրա վերցնելու ամսաթվից, փոխհատուցման ժամանակաշրջանի ընթացքում կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարները ճանաչվում են որպես ծախս՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարների այն մասը, որը չի ճանաչվում որպես ծախս, հաշվառվում է որպես կանխավճար:

Ապահովագրության պայմանագրերի դադարեցումը

Ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովագիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Այդ իսկ պատճառով, չեղյալ են հայտարարվում հիմնականում ապահովագրության այն պայմանագրերը, որոնցով նախատեսված ապահովագրավճարները վճարվում են մասնաբաժիններով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարների պահուստն իրենից ներկայացնում է համախառն ապահովագրավճարների այն մասը, որն ակնկալվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական տարիներում: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է առանձին յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի համար՝ օգտագործելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով:

Պահանջներ

Չուտ պահանջները ներառում են ֆինանսական տարվա ընթացքում վճարված հատուցումները՝ չվճարված պահանջների գծով պահուստի շարժի հետ մեկտեղ: Չվճարված պահանջները ներառում են հաշվետու ամսաթվի դրությամբ առաջացած, սակայն չվճարված բոլոր պահանջների կարգավորման համար գնահատված ամբողջ ծախսի գծով պահուստները, ինչն էլ դրանք ներկայացված, թե՛ ոչ, ինչպես նաև հարակից պահանջների կարգավորման համար պահանջվող արտաքին ծախսերի գծով պահուստները:

Չվճարված պահանջները գնահատելու համար ուսումնասիրվում են առանձին պահանջները և ձևավորվում են պահուստներ տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով, ներքին և արտաքին կանխատեսելի ռիսկերի հետևանքները, այդ թվում՝ պահանջների կարգավորման արտաքին ծախսերը, օրենսդրության փոփոխությունները, նախկին փորձը և միտումները: Չվճարված պահանջների գծով պահուստները չեն գեղջվում:

Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով ակնկալվող վերականգնումները ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ: Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով վերականգնումների գնահատման համար կիրառվում է չվճարված պահանջների գնահատման համար կիրառվող մեթոդը:

Նախորդ տարիներին ձևավորված պահանջների գծով պահուստների գումարների ճշգրտումներն արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որի ընթացքում կատարվել են ճշգրտումները, և բացահայտվում են առանձին, նշանակալի լինելու դեպքում: Կիրառվող մեթոդները և կատարված գնահատումները վերանայվում են կանոնավոր հիմունքով:

(iii) Վերաապահովագրություն

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերաապահովագրությունը՝ ռիսկերի մի մասը վերաապահովագրողներին փոխանցելու միջոցով իր հնարավոր գուտ վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության պայմանագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ հանձն առած իր պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարները և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրական պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Վերաապահովագրությունից ստացվելիք գումարները գնահատվում են այն նույն մեթոդով, որը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված կարգավորված պահանջների գնահատման համար:

Ստանձնած վերաապահովագրության գծով ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի գործունեություն՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների դասակարգումը:

Վերաապահովագրության պայմանագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա գումարները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Այս ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք, և այդ դեպքն արժանահավատորեն չափելի ազդեցություն ունի այն գումարների վրա, որոնք Ընկերությունը կստանա վերաապահովագրողից: Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

(iv) Հետաձգված ձեռքբերման ծախսումներ

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարված միջնորդաճանարներ և վերաապահովագրության գծով միջնորդաճանարներ, հետաձգվում և ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները:

(v) Պարտավորությունների համարժեքության ստուգում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք չվաստակած ապահովագրավճարների համարժեք են (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար): Այս ստուգումների համար օգտագործվում է ապագա դրամական պայմանագրային հոսքերի, այդ պահին գործող ապահովագրության պայմանագրերի չլրացած ժամկետներին վերագրելի պահանջների կարգավորման և ապահովագրության պայմանագրերի վարչարարության ծախսերի, ինչպես նաև նման պարտավորությունների վճարումը ապահովող ակտիվներից ստացված ներդրումային եկամտի ներկայիս լավագույն գնահատականը: Պակասորդի հայտնաբերման դեպքում, համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում, ձևավորվում է լրացուցիչ պահուստ (ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստ): Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում:

(vi) Ապահովագրության գծով ստացվելիք և վճարվելիք գումարներ

Ապահովագրողներին, գործակալներին և վերաապահովագրողներին վճարվելիք և նրանցից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքներ և ներառվում են ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական գումարների կազմում, այլ ոչ ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներում կամ վերաապահովագրության գծով ակտիվների կազմում: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության գծով դեբիտորական պարտքերն արժեզրկման տեսանկյունից:

(q) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում ձեռքբերման ամսաթվից մինչև երեք ամիս մարման ժամկետով կանխիկ դրամական միջոցների մնացորդները և ցպահանջ ավանդները, որոնց իրական արժեքը չի ենթարկվում էական փոփոխությունների:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնք Ընկերությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնք Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Զափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ դրանց վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ փոխառությունների ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, այն ամենաբարենպաստ շուկայում, որտեղ Ընկերությունը հնարավորություն ունի մուտք գործել նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Ծուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով, իսկ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգվում է: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն միայն մինչև այն պահը, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Ընկերությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև շարժերն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են փոփոխությունները:

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող

գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ երբ ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ե) Արժեզրկում

(i) Ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը փոխառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները փոխառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, փոխառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող փոխառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող փոխառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների անբարենպաստ փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ երկարատև նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են ապահովագրության գծով ստացելիք գումարները, տրամադրված փոխառությունները, բանկային ավանդները և ներդրումային արժեթղթերը (փոխառություններ, դեբիտորական պարտքեր և արժեթղթեր): Ընկերությունը վերանայում է իր փոխառությունները, դեբիտորական պարտքերը և արժեթղթերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին փոխառությունների, դեբիտորական պարտքերի և արժեթղթերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա անհատական կամ խմբային հիմունքով՝ այն փոխառությունների, դեբիտորական պարտքերի և արժեթղթերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ անհատական հիմունքով գնահատված փոխառության կամ դեբիտորական պարտքի կամ արժեթղթի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ փոխառությունը, դեբիտորական պարտքը կամ արժեթղթը պարտքային ռիսկի համանման բնութագրերով փոխառությունների, դեբիտորական պարտքերի և արժեթղթերի խմբում և դրանք խմբային հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն փոխառությունները, դեբիտորական պարտքերը և արժեթղթերը, որոնք անհատական հիմունքով են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման խմբային հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի գծով արժեգրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի հաշվեկշռային արժեքի և այդ փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և նախորդ ժամանակաշրջանների վնասների տվյալները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտելի տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Հավաքական արժեգրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են՝ հաշվի առնելով դեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Որոշ դեպքերում դիտելի տվյալները, որոնք պահանջվում են փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի գծով արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ կիրառելի տվյալ հանգամանքների համար: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, արժեգրկումից կորստի չափը գնահատելու համար, վերջինիս առկայության դեպքում, Ընկերությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառությունների, դեբիտորական պարտքերի և արժեթղթերի գծով արժեգրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա անը կարելի է անկողմնակալ կերպով կապել արժեգրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի հավաքագրումը հնարավոր չէ, այն դուրս է գրվում ի հաշիվ արժեգրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Ընկերությունը փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի մնացորդը (և արժեգրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ դեկավարությունը որոշում է, որ փոխառությունը, դեբիտորական պարտքը կամ արժեթղթը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են փոխառության, դեբիտորական պարտքի կամ արժեթղթի վերադարձման հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեգրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեգրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեգրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեգրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեգրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեգրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեգրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՞ր՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինե՞ր:

(գ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ե) Կանոնադրական կապիտալ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաժնետոմսերը ենթակա են մարման բաժնետիրոջ հայեցողությամբ: Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջը տվյալ տարվա զուտ ակտիվների իր բաժնեմասը դրամական միջոցներով, կամ բաժնետիրոջ համաձայնությամբ՝ ակտիվների բնաիրային փոխանցման միջոցով:

ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. Ներկայացում» ստանդարտի համաձայն՝ բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, քանի որ դեկավարությունը եզրակացրել է, որ Ընկերության վերադարձելի ֆինանսական գործիքները բավարարում են ՀՀՄՍ 32 ստանդարտի սեփական կապիտալի ներկայացման բոլոր պահանջները:

Ծահաբաժիններ

Ծահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Ընկերության բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ը) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից առաջացած այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

(թ) Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

(ժ) Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Ընկերությունը որոշում է, թե արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Վարձակալության բաղադրիչ պարունակող պայմանագրի սկզբում կամ փոփոխության դեպքում, Բանկը վերագրում է պայմանագրում սահմանված հատուցումը վարձակալության յուրաքանչյուր բաղադրիչի վրա՝ հիմք ընդունելով վարձակալության բաղադրիչի առանձին գինը:

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մատով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Ընկերությանը չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Ընկերությունը կիրառորձի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով, վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մատով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ գեղջված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Ընկերությունը որպես գեղջման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հաստատուն վճարումները:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Ընկերության գնահատականի փոփոխություն, եթե Ընկերությունը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Ընկերությունը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների գծով վարձավճարները Ընկերությունը ճանաչում է որպես ծախս գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

(h) Հրապարակված, սակայն դեռևս չկիրառվող ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ վաղաժամ կիրառելու հնարավորությամբ: Այնուամենայնիվ, Ընկերությունը վաղաժամ չի կիրառվել նոր ստանդարտները և ստանդարտների փոփոխություններն այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Դեռևս չգործող ստանդարտներից՝ ՖՀՄՍ 17-ը և ՖՀՄՍ 9-ը ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակ:

Անցում ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառումից բխող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները սովորաբար կիրառվում են հետընթաց՝ ՖՀՄՍ 17-ի անցումային դրույթներին համապատասխանելու համար: ՖՀՄՍ 9-ի կիրառումից բխող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները ճանաչվելու են 2022թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկելու են:

(i) ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»

2017թ. մայիսի 18-ին հրապարակված ՖՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» գործում է 2023թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4-ը, որը թույլ է տալիս ընկերություններին կիրառել գոյություն ունեցող հաշվապահական հաշվառման մոտեցումն ապահովագրության պայմանագրերի համար: ՖՀՄՍ 17-ը սկզբունքների վրա հիմնված հաշվապահական հաշվառման միասնական ստանդարտ է ապահովագրողի բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում՝ վերաապահովագրության պայմանագրերի համար:

Հաշվապահական հաշվառման այս նոր ստանդարտը սահմանում է ճանաչման և չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքներ բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի համար՝ անկախ դրանք տրամադրող կազմակերպության տեսակից: ՖՀՄՍ 17-ի ընդհանուր նպատակն է ապահովել ապահովագրական գործունեության հետ կապված եկամուտների և ծախսերի թափանցիկությունը, ժամանակին և թափանցիկ կերպով արտացոլել տնտեսական փոփոխությունների ազդեցությունը և ավելի շատ տեղեկատվություն տրամադրել ապահովագրական գործունեության ընթացիկ և ապագա շահութաբերության մասին:

ՖՀՄՍ 17-ի համաձայն՝ ապահովագրության պայմանագրերի չափման համար կիրառվում է երեք մոտեցում՝ ***հիմնական մոտեցում, ապահովագրավճարի բաշխման մոտեցում, փոփոխական վճարի մոտեցում:***

Հիմնական մոտեցում

Հիմնական մոտեցման համաձայն՝ ապահովագրության պայմանագրերի խմբերի սկզբնական ճանաչման և չափման հիմքում ընկած են.

- ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկի մասով ճշգրտումով ներկա արժեքը, որը հաշվի է առնում ողջ հասանելի տեղեկատվությունը պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի մասին, որը համապատասխանում է դիտելի շուկայական տեղեկատվությանը, որին ավելացվում է (եթե արժեքը պարտավորություն է) կամ որից հանվում է (եթե արժեքը ակտիվ է),
- պայմանագրերի խմբի գծով չվաստակած շահույթի գումարը (պայմանագրային ծառայությունների մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրության պայմանագրերի խմբի գծով շահույթն այն ժամանակահատվածում, որի ընթացքում նրանք ծածկույթ են տրամադրում: Եթե պայմանագրերի խումբը շահութաբեր չէ կամ դառնում այդպիսին, Ընկերությունն անմիջապես վնաս է ճանաչում:

Հիմնական մոտեցման համաձայն՝ ապահովագրության պայմանագրերի հետագա չափումը ներառում է.

- պայմանագրերի խմբի կատարման համար մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը, որը Ընկերության վճարելու պարտականությունն է և գումար ստանալու իրավունքն է տեղի չունեցած ապահովագրական պատահարների և չմատուցված ծառայության համար,
- պայմանագրերի խմբի կատարման համար կրած պահանջների գծով պարտավորությունը, որը Ընկերության պարտականությունն է դիտարկել և վճարել՝
 - վավեր պահանջներն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել,
 - վավեր պահանջներն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել, սակայն որոնց գծով պահանջներ դեռևս չեն ներկայացվել,
 - այլ կրած ապահովագրական ծախսերը և
 - արդեն մատուցված ծառայություններին վերաբերող գումարները:

Մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ.

- ապահովագրական հասույթ՝ ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունների արդյունքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության նվազման դեպքում,
- ապահովագրական ծառայության ծախսեր՝ անբարենպաստ պայմանագրերի խմբերի գծով վնասների և այդպիսի վնասների հակադարձումների դեպքում,
- ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում:

Կրած պահանջների գծով պարտավորության հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ.

- ապահովագրական ծառայության ծախսեր՝ ժամանակաշրջանի ընթացքում կրած պահանջների և ծախսերի հետևանքով պարտավորության աճի դեպքում,
- ապահովագրական ծառայության ծախսեր՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում հետագա ցանկացած փոփոխությունների դեպքում,
- ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր՝ փողի ժամանակային արժեքի ազդեցության և ֆինանսական ռիսկի ազդեցության դեպքում:

Ապահովագրավճարի բաշխման մոտեցում

Ապահովագրավճարի բաշխման մոտեցումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ.

- խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը 12 ամիս է կամ ավելի քիչ,
- պարզեցումը կհանգեցնի խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափմանը, որն էականորեն չի տարբերվի հիմնական մոտեցման կիրառմամբ ստացված արդյունքից:

Ապահովագրավճարի բաշխման մոտեցման համաձայն՝ սկզբնական ճանաչման պահին պարտավորության հաշվեկշռային արժեքը հետևյալն է.

- ապահովագրավճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,
- հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը նախընտրում է այդ վճարումները ճանաչել որպես ծախս,
- գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության՝ այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչումից առաջացող ցանկացած գումար:

Ապահովագրավճարի բաշխման մոտեցման համաձայն՝ հետագա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքն է՝

- գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրավճարները,
- հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը,
- գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս,
- գումարած ֆինանսավորման բաղադրիչի գծով ցանկացած ճշգրտումը,
- հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումարը և
- հանած ցանկացած ներդրումային բաղադրիչ, որը վճարվել կամ փոխանցվել է կրած պահանջների գծով պարտավորությանը:

Փոփոխական վճարի մոտեցում

Փոփոխական վճարի մոտեցումը կիրառվում է ուղղակի մասնակցության հատկանիշներով ապահովագրության պայմանագրերի համար և հիմնականում ներառում է կյանքի ապահովագրության պայմանագրերը: Ընկերությունը չի պլանավորում կիրառել այս մոտեցումը:

Այսպիսով, ՖՀՄՍ 17-ը ներկայացնում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների չափման տարբեր մոտեցումներ: Ակնկալվում է, որ Ընկերության կողմից կնքված ապահովագրական պայմանագրերի մոտ 90%-ի գծով 2023թ-ին կիրառվելու է ապահովագրավճարների բաշխման մոտեցումը, քանի որ դրանք կարճաժամկետ ապահովագրության պայմանագրեր են:

Ազդեցության գնահատում

Ներկայումս Ընկերությունը մշակում է ՖՀՄՍ 17-ի կիրառման պլանը և դեռ չի գնահատել ՖՀՄՍ 17-ի կիրառման ազդեցությունը:

(ii) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման և չափման պահանջները: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում» ստանդարտը:

Դասակարգում. Ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ով նախատեսում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մատեցում, որն արտացոլում է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում կառավարվում են ակտիվները, և դրամական հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերը:

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և

- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այսպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է այս դասերից մեկին սկզբնական ճանաչման պահին:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել որոշակի տոկոսային եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՛ հավաքված դրամական հոսքերի վրա:
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը առանձին չի դիտարկվում, այն դիտարկվում է իրականացնելիս ընդհանուր վերլուծություն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են և որոնց արդյունավետությունը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեզրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ),
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:

Ազդեցության գնահատում

ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման հնարավորությունից օգտվող ապահովագրողների համար ՖՀՄՍ 4-ով պահանջվող լրացուցիչ բացահայտումները պատրաստելու նպատակով Ընկերությունն ավարտել է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշի գնահատումը: Իրականացված գնահատման արդյունքում որոշվել է, որ միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ հանդիսանալու չափանիշը բավարարում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները: Ընկերությունը դեռ չի ավարտել ֆինանսական ակտիվների կառավարման թիզնես մոդելների գնահատումը: Իր նախնական գնահատումներից ելնելով Ընկերությունը չի գտնում, որ դասակարգման նոր պահանջներն նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Արժեզրկում. Ֆինանսական ակտիվներ և պայմանագրային ակտիվներ

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած կորուստներ» մոդելը «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր մոդելի կիրառումը պահանջում է էական դատողություններ այն մասին, թե ինչպես են տնտեսական գործոններն ազդում «ակնկալվող պարտքային կորուստների վրա, որը որոշվում է հավանականությամբ կշռված լինելու հիմունքով:

Արժեզրկման նոր մոդելը կկիրառվի ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նկատմամբ, բացառությամբ բաժնային գործիքներում ներդրումների, ինչպես նաև պայմանագրի գծով ակտիվների նկատմամբ: Ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի նկատմամբ չեն կիրառվում ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ կորստի պահուստը կչափվի հետևյալ հիմունքներից որևէ մեկով.

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտագանցման դեպքերից և
- ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտագանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափումը կիրառվում է այն դեպքում, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր: Հակառակ դեպքում չափվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը կարող է որոշել, որ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել, եթե ակտիվն ունի ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափումը միշտ կիրառվում է առևտրական դեբիտորական պարտքերի և նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող պայմանագրի գծով ակտիվների համար:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները պահանջում են դեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, մասնավորապես հետևյալ ոլորտներում, որոնք մանրամասն ներկայացված են ստորև.

- գնահատում, թե արդյոք տեղի է ունեցել գործիքի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր,
- ապագայամետ տեղեկատվության ներառում ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ:

Ազդեցության գնահատում

Ընկերությունը գտնում է, որ արժեզրկումից կորուստները հավանաբար կաճեն և կդառնան առավել փոփոխական այն ակտիվների համար, որոնց համար գործում է ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելը: Ընկերությունը դեռ չի ավարտել ակնկալվող պարտքային կորուստների գնահատման իր մեթոդաբանության մշակումը:

Դասակարգում. Ֆինանսական պարտավորություններ

ՖՀՄՍ 9-ը զգալի չափով պահպանում է ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների դասակարգման պահանջները: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ այն ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները, որոնք նախատորոշվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ճանաչվում են շահույթում կամ վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն, իրական արժեքի այս փոփոխություններն որպես կանոն ներկայացվում են հետևյալ կերպ.

- պարտավորության գծով պարտքային ռիսկի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, իսկ
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ներկայացվում է շահույթի կամ վնասի կազմում:

Ընկերությունը չի դասակարգել որևէ ֆինանսական պարտավորություն շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքների դասին և չունի նման մտադրություն ներկա պահին: Ընկերության գնահատմամբ ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառումը նշանակալի ազդեցություն չի ունեն ֆինանսական պարտավորությունների դասակարգման վրա:

Բացահայտումներ

ՖՀՄՍ 9-ի համաձայն կպահանջվեն մանրամասն նոր բացահայտումներ հատկապես պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորուստների հետ կապված: Գնահատման ընթացքում Ընկերությունը կատարել է վերլուծություն նպատակ ունենալով բացահայտել բացակայող տեղեկատվությունը: Ընկերությունը գտնվում է համակարգերի և հսկողության մեխանիզմների փոփոխությունների ներդրման գործընթացում, որոնք, Ընկերության կարծիքով, անհրաժեշտ կլինեն պահանջվող տեղեկատվության առկայությունն ապահովելու համար:

Անցումը նոր ստանդարտին

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում կատարվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններն ընդհանուր առմամբ կկիրառվեն հետընթաց, բացառությամբ ստորև ներկայացված դեպքերի:

- Ընկերությունը կօգտվի այն բացառությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համադրելի տվյալները դասակարգման և չափման (ներառյալ՝ արժեզրկման) փոփոխությունների հետ կապված: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերություններն ընդհանուր առմամբ կճանաչվեն չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2021թ. հունվարի 1-ի դրությամբ:
- Սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող փաստերից և հանգամանքներից ելնելով՝ պետք է կատարվեն հետևյալ գնահատումները.
 - Որոշել այն բիզնես մոդելը, որի շրջանակներում պահվում է ֆինանսական ակտիվը:

Եթե ֆինանսական ակտիվն ունի ցածր պարտքային ռիսկ ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ, Ընկերությունը ենթադրում է, որ տվյալ ակտիվի գծով պարտքային ռիսկն նշանակալիորեն չի անել սկզբնական ճանաչումից ի վեր:

(iii) Այլ ստանդարտներ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2022թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները: Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)